

## ՀԱՅ ՄԻԶՆԱՊԱՐՅԱՎ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐԱՅԻՆ ԻԴԵԱԼԱԿԱՆ ԱՅԳՈՒ ԵՎ ՆՐԱ ԹԵՐԱՐԺԵՔՈՒԹՅԱՎ ՄԱՍԻՆ

**Համլետ Պետրոսյան**

*Պատմական գիտությունների դոկտոր*

ԵՊՀ

Երկինք մխրճվող ձյունածածկ լեռնագագաթ և հովտում աճող խաղողի այգի - ահա բնության և մշակույթի այն երկու խտացումները, որոնք դարեր շարունակ ուղեկցել են հայերին և կազմավորել նրանց աշխարհն ու կենալներացը նկարագրող հիմնական համակարգերը: Այգեգործության և, մասնավորապես խաղողագործության հնագույն այս երկրում, ուր խաղողի մշակութայնացման առաջին քայլերը հայտնի են մ.թ.ա. 5-րդ հազ. սկսած, հովտային և նախալեռնային բնակավայրերի պեղումները երևան են բերել այգիներում, տներին, պալատներին և տաճարներին կից կառուցված հնձանների և գինու մառանների տասնյակ շենքեր: Դին վիմագրերը, մատյանները, քանդակներն ու մանրանկարները լի են այգիների մասին հիշատակություններով, նկարագրություններով, պատկերներով: Նրանք մեր առջև բացում են ավանդական երկրագործ հանրույթի աշխարհը, ուր այգին միայն պտղատու ծառերի ամբողջություն չէ, ուր խաղողը սոսկ քաղցր պտուղ տվող տնկի չէ և ոչ էլ գինին՝ ուրախ ժամանցի միջոց:

Խաղողը տարբերվում էր բոլոր այլ պտուղներից նրանով, որ նրանից ստացվում էր գինի<sup>1</sup>, որը արյան հետ ունեցած իր արտաքին նմանությամբ և օրգանիզմի վրա բողած ազդեցության շնորհիվ միֆապոետիկ մտածողության մեջ հեշտությամբ կարող էր գբաղեցնել նրա տեղը: Ավելին, այն նույնացվում էր աստվածային արյան հետ և ձեռք բերում մահի հաղթահարելու, անմահություն պարզելու սրբազն ֆունկցիա: Ուստի, «անմահության հեղուկ» տվող «կենաց ծառի» տնկումը, աճեցումը և պահպանությունը նույնպես ստանում էին սրբազն գործունեության իմաստ: Դեռևս ուրարտական արքաները գահ բարձրանալով հոգ էին տանում իրենց անունով այգի տնկելու մասին՝ այս գործը պակաս կարևոր չհամարելով ռազմական սխրանքներից և տաճարների կառուցումից: «Իշպուինի Սարդուրորդին և Մինուա Իշպուինորդին նոր խաղողուտ հիմնեցին... հաստատեցին կարգ. Երբ խաղողի ծառերը էտվեն, խալիդ

<sup>1</sup> Иванов В. В. Вино.- В кн.: Мифы народов мира, М., 1991, т. 1, с. 236. Այս առումով խաղողի հետ համեմատելի էր միայն նույնը, որը հորինվածքներում համեն է զալիս խաղողի հետ միասին կամ հեշտությամբ փոխարինում նրան: Դայկական հերիաթներում, էպոսում և պոեզիայում նույնիսկ ընգծվում է նրան գինու առաջնությունը՝ հասկապես յոթ տարվա, որը շեշտում է նրա սրբազն-

աստծուն 3 խոյ թող զոհաբերեն, 3 խոյ՝ բոլոր աստվածներին, երբ խաղողուտը կառուցվի (վազերը բարձրացվեն հենակների վրա)՝ Խալիք աստծուն 3 խոյ թող զոհաբերվի, 3 խոյ՝ բոլոր աստվածներին», - կարդում ենք Իշպուինի և Սինուա արքաների մի հայտնի արձանագրության մեջ<sup>1</sup>: «...Չորս ջրանցք անցկացրի, խաղողուտ ու պտղատու այգի տնկեցի, սիրանքներ այնտեղ կատարեցի», - այսպես է ներկայացնում իր գործունեության դրվագներից մեկը Արարատյան դաշտում Ուրարտուի արքա Արգիշտի Առաջինը<sup>2</sup>:

Դայ պատմիչների հաղորդմամբ առասպելական Շամիրամն Արայի մահից հետո (այսինքն, երբ ստանձնում է հայոց «արքայի» դերը) Վանա լճի մոտ քաղաք է հիմնում «և բազում բազմաբերս և գիներերս ի նմա տնկեաց հովիտս»<sup>3</sup>, Երվանդ արքան գահ բարձրանալուն պես հիմնում է «ծննդոց ամտաօբը»<sup>4</sup>, Խոսրով արքան հիմնում է իր անվամբ հայտնի ամտաօբ, որը Փավստոս Բուզանդը ուղղակի անվանում է «տաճար մայրի»՝ շեշտելով նրա սրբազն բնույթը<sup>5</sup>: Փաստորեն արքայի տնկած այգին այն մորելն էր, «քաղաքական»<sup>6</sup> այն «ծրագիրը», որին պիտի հետևեին ինքը արքան, նախարարն ու հոգևորականը, Երկրագործն ու վարպետը: Պատահական չէ, որ Երկրի խաղաղ և ապահով վիճակը պատկերվում էր որպես նշակած այգի: Ահա թե ինչպես են նկարագրում Աշոտ Ա և Սմբատ Ա Բագրատունի թագավորների կառավարման խաղաղ տարիները ժամանակի պատմիչները. «Իսկ աշխարհիս Դայաստանեայց յաւուրսն

<sup>1</sup> Դմայակյան Ա., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 11-12, 97: Փաստորեն արքայական այգու ամի բոլոր կարևոր փուլերը պիտի նշվեին հասուլ զոհաբերություններով: Ավելին, թվում է, թե այս այգին նաև մի յուրօրինակ «ստուացուց» էր և համապետական տոնների ժամանակը սահմանվում էր ըստ նրանուն ընթացող փոփոխությունների (Տե՛ս Դմայակյան Ա., Նշվ.աշխ. էջ 76-78):

<sup>2</sup> Յրարտքական կլիոնօբրազնության հաճուսու, Մ., 1960, ս.263.

<sup>3</sup> Սովորսի Խորենացու Պատմութիւն Դայոց, Տիֆլիս, 1913, էջ 53.

<sup>4</sup> Սովորս տեղում, էջ 166: «Ծննդոց» է կոչվում Աստվածաշնչի առաջին գիրքը, ուր նկարագրվում է Արարի կողմից աշխարհ-տիեզերքի ստեղծումը: Ուրեմն արքայի ստեղծածն էլ պատկերացվում էր որպես ննան մի կառուց, այլ ոչ թե մի սովորական անտառ:

<sup>5</sup> Փաւստոսի Բուզանդացու Պատմութիւն Դայոց, Վենետիկ, 1889, էջ 18:

<sup>6</sup> «Քաղաքականութիւն» բարը միշին դարձերում ումենք համարյա նոյն հմաստը, ինչ մեր օրերում և նշանակում էր Երկրի քարգավաճանը, բարեկարգմանն ուղղված գործունեություն (նամրամասն տես Ավալելեյան թ., Զվարթնոցի հարցի շուրջը - Դայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 158): Սենք արդեն նշեցինք, որ Զվարթնոցի տաճարը շնորհիվ իր բուսաբանդակ գոտիների ներկայանում է որպես Երկնային այգու մի մորել: Ուշագործ է, որ Զվարթնոցի տաճարի հարլամությամբ պայտական համալիրի կառուցումից հետո Ներսես Ծինարար կարողիկուրը «կարգեալ կացուցանէր ի նմա ամբոխութիւնս Երդումարդաց ըստ պայմանի քաղաքականաց. և ածեալ ջուր ի Քասաղ գետոյ՝ զամենայն աւազախիր առապար դաշտավայրն ի գործ արկանէր, տնկէր այգին և բուրաստան ծաղկցաց» (Յովհաննու Դրասիանականական Պատմութիւն Դայոց, Թիֆլիս, 1912, էջ 118) այսինքն՝ բնակեցնում է այնտեղ բազմաթիվ ընտամիքներ, տնկում է այգիներ ու ծաղկանոցներ, ինչպես և պահանջում է քաղաքականությունը: Եվ հատկանշական է, որ տաճարին կից պայտական համալիրի կարևոր բաժանմունքներից մեկն է հնձանահարկն է՝ խաղողը զգմելու ընդարձակ հարթակներով և գիրու մեծածավալ հորենու:

յայնոսիկ այց արարեալ Տեառն... տնկեցին այգիս և արմատացուցին բուրաստանս ծիթենեաց և պարտիզաց, հերկեցին հերկս արտաքոյ փշոց և կրեցին պտուղս հարիւրաւորս, գեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հնձոց, լցան գուբբ զինւոյ ի կութս այգեստանեաց»<sup>1</sup>: «Յաւուրս սորա և յիշխանութեան հօր իւրոյ էր շինութիւն և խաղաղութիւն յաշխարիխ Յայոց ըստ մարգարեութեանն՝ հանգչել իւրաքանչիւր ուրութ ընդ որբով իւրով և ընդ թզենեաւ»<sup>2</sup>: Իսկ Արիստակես Լաստիվերտցին «այգային» լեզվով է նկարագրում երկրի թե՛ բարեկեցիկ, և թե՛ ողբերգական կացությունը: Ըստ նրա՝ բյուզանդական նվաճման ժամանակ Յայատանում «ոչ լսի ծայն ուրախութեան ի կութս այգեաց և ոչ բարեբանութիւն առ կոխօսու հնձանի»<sup>3</sup>: Եվ ի հակադրություն դրա՝ Բագրատունիների ժամանակ Յայոց աշխարիը նման էր արքայի առաջ փռված տնկախիտ, կանաչագեղ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշութ և երջանիկ այգու՝ «Աշխարհ՝ որ երբեմն ժամանակաւ իրրև զդրախստ տնկախիտ առաջի իւր, կանաչագեղ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշութ և երջանիկ անցաւորացն ցուցանիւր...»<sup>4</sup>: Այգի-աշխարիի այս իրեալն է ձգտում պատկերել և վարպետը, և դրա լավագույն արտահայտությունն է Վանա լճի Աղթամար կղզում 10-րդ դ. Գագիկ Արծրունի արքայի հրամանով Մանվել ճարտարապետի կառուցված Սուրբ Խաչ տաճարի «որթագալարի գոտին» (Ակ. 1): Գյուղական կյանքի ռեալիստական պատկերներն այստեղ ոչ միայն համադրվում են առասպելական-սիմվոլիկ դրվագների հետ, այլև ընտրված են այնպես, որ ներկայացնում են ոչ թե ռեալ այգին և այգեգործական ցիկլը, այլ իրեալական աշխարին ու կենսընթացը: Այդ այգին, ինչպես որ ցանկացած տիեզերական մողելի դեպքում է, ներկայացված է հասուն պահին, համանասն կրկնվող, սկզբունքորեն չընդհատվող կամարաձև որբն ինքն է կազմակերպում աշխարիը, ինքն է նրա կենաց ծառը, ինքն է լցնում ողջ տիեզերքը ողկույզներով: Այն նաև անձնավորված է և սովորաբար ներկայանում է վազի բնում ապրող մորութավոր ծերունու տեսքով: Ողջ գոտում միայն մի կառույց է պատկերված և դա հնձանն է՝ այգու «դինամիկ» կենտրոնը, ուր կենաց ծառի պտուղը վեր է ածվում կենաց հեղուկի (Ակ. 2): Այգին բաց է յուրայինների համար. թռչունների ու կենդանիների մեծ մասն այստեղ ապրում է ազատ և անհոգ, ծերունիները հանգստանում են «որթի շվաքում», մի երիտասարդ բերում է մատաղացու գառը, ուրիշ երկուսը կոխսի են բռնվել.

<sup>1</sup> Դրասիանակերտցի, էջ 198-199:

<sup>2</sup> Ստեփանոսի Տարօնեցւոյ Աստղկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 161:

<sup>3</sup> Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցույ, Երևան, 1963, էջ 58:

<sup>4</sup> Նույն տեղում:

քահանան աղոթք է մրմնջում: Բայց անողոք պայքար է մղվում թշնամու դեմ, որի բացարձակ սիմվոլը արջն է պատկերված յոթ անգամ, որից հինգ դեպքում մարդու հետ արյունահեղ կրվի մտած<sup>1</sup>: Գոտին արևելքուն ավարտվում է բերքի համտեսման և գինու ընալու տեսարանով, ուր պատկերված է Գագիկ արքան իր երկու մերձավորների հետ (Ըկ. 3)` գոտու ողջ տրամաբանությունից բխող նույն պարզությամբ: Նրա առջև նույնիսկ մատուցարան չկա, նրա հագուստն ի տարրերություն տաճարի արևմտյան ճակատին պատկերված «պաշտոնական» հագուստի, բավականին համեստ է, փոխված է նույնիսկ փառահեղ թագը: Արքան որպես «բարի այգեպան» նստել է ոչ թե պալատում՝ գահի վրա, այլ այգում՝ «որթի և նօնենու տակ»: Նա աջով բռնել է «կենաց բաժակը», իսկ ձախով խաղող է պոկում «կենաց ծառից»: Երկու մերձավորներն էլ աջից և ձախից նրան մատուցում և ցուցադրում են այգու պտուղները: Արքայի առջև փոխված է նրա աշխարհը, նրա քաղաքականության արդյունքը՝ «տնկախիտ, կանաչազարդ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշուք և երջանիկ մի դրախտ»:

Աշխարհի և կյանքի «այգային» ընկալումը հատուկ վերաբերմունք էր ցուցաբերում նաև դեպի Սուրբքրդային այն առասպելները, կերպարներն ու նկարագրությունները, որոնք այս կամ այն չափով կապ ունեին այգու հետ: Դա նախ վերաբերում էր Եղենի դրախտին (Ծննդ., Բ, 8-15) և նոյն տնկած այգուն (Ծննդ., Թ, 20, 21), որոնք տեղայնացնան մեծ հնարավորությունը տնտեսա-մշակութային մեծ արժեք ուներ, և որտեղից սկիզբ էին առնում դրախտային Եփրատն ու Տիգրիսը: Այս առումով հատկապես առանձնացվում էր Արարատյան դաշտը՝ Մեծ Հայքի հայտնի Երկրագործական, քաղաքական և մշակութային կենտրոնը: Օրինակ, 5-րդ դ. պատմիչ Ղազար Փարպեցին այն համարում էր աստվածատուր, դրախտին և Ավետյաց Երկրին համենատելի մի մեծություն: «Եւ արդ՝ զայսպիսի զըղձակերտ գաւառ, զընաշխարհիկ և զամենալի ըստ տուչութեան ամենախնամ արարչին Աստուծոյ, զայրարատեան գաւառ, որ է գլուխ աշխարհիս Հայոց, զգաւառն համբաւատենչ, զգաւառն ամենալի, որ բերէ յինքեան օրինակ լիութեան, ըստ բանի գրոյն, զերկրին Եգիպտացւոց և զդրախտին Աստուծոյ...»<sup>2</sup>:

<sup>1</sup> Ուշագրավ է, որ ըստ հայկական մի ավանդության աշխարհի առաջին այգեպանը՝ մեղք գործելով՝ վերածվում է արջի՝ դամալով արքայի և Թրիստոսի թշնամին (Տե՛ս Ղանալանյան Ա.՝ Ավանդապատում, Երևան, 1969, էջ 120):

<sup>2</sup> Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն հայոց եւ թուղթ առ Կահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, էջ 23-24:

Իսկ 11-րդ դ. սկիզբ առնող հայկական ավանդություններն արդեն Արարատյան դաշտը և Մասիս լեռը կապելով ջրհեղեղի հետ (այս մասին տես «Սուրբ Լեռը») հատուկ կարևորություն են տալիս Նոյի տնկած խաղողի այգուն. «գեօղն Ակորի, որ ստուգաբանի Արկուրի, յոտն Աւագ Մասեաց,- կարդում ենք 12-13-րդ դդ. մի տեսիլքում,- վասն զի յելանելն Նոյի ի տապանեն և յիշանելն ի լեռնեն, անդ տնկեաց այգի և անուանեաց զտեղին Արկուրի»<sup>1</sup>: Այս հենքի վրա Արարատյան դաշտով անցնող Արաքսն է նույնացվում է դրախտային Գեհոն գետի հետ<sup>2</sup>, և Արարատյան դաշտը (Երբեմն Յայաստանն ընդհանրապես) կորուսյալ դրախտի հայրենիք ու մարդկության երկրորդ բնօրրան համարող մտայնությունը լայն տարածում է ստանում:

Հայկական մի զրույց էլ՝ ընդգծելով Աբրահամի հյուրասեր կերպարը (հմտ. Ծննդ., ԺԸ), պատմում է, թե ինչպես այս նահապետի մորթած հորթի ոսկորներից՝ հրեշտակի պատվերով խաղողի որթ է աճում<sup>3</sup>: Յետևելով այս զրույցին, 14-րդ դ. մանրանկարիչը Աբրահամի հյուրասիրության տեսարանում Մամրեի կաղնիները փոխարինել է խաղողի բարձր վազերով, որոնք կից բանաստեղծության մեջ բնորոշվում են միանգամից աճած, երդիկից էլ վեր բարձրացած և այնտեղից ցած կախված՝ այսինքն տիեզերական մի ծառ:

Այգային պատկերացումների արտահայտման լայն դաշտ էին բացում նաև Նոր կտակարանային մի շարք ալեգորիկաներ. Քրիստոսը որպես ծշմարիտ որթատունկ (Յովհ., ԺԵ, 1,5), գիճին որպես աստվածային արյուն (Մատթ., ԻՉ, 27, 28), Արդար դատաստանը որպես հոգի-ողկույզների հավաքում և ճմլում Աստծոն հնձանում և Աստված էլ որպես վերին (և վերջին) այգեպան (Յայտն., ԺԴ, 18-20): Քրիստոսի հետևությամբ խաղողի որթի և հնձանում ճմլվող խաղողի են նմանեցվում հայ սրբերն ու մարտիրոսները:

Ծշմարիտ որթոյն Քրիստոսի շառակիդք

և ողկոյգ ճմլեալք երկնաւոր մշակին,

կոխեցայք ճգնութեամբ ի հնձանս ձեր,

զի ուրախ լինիջիք անմահական բաժակաւն», - այսպես է բնորոշում նահատակ Յոհիվսինեյան կույսերին 6-րդ դ. կաթողիկոս Կոմիտասը.<sup>4</sup>

Քրիստոսի, որպես ծշմարիտ որթի և ողկոյզի պատկերացումը սերտորեն կապվում էր նաև խաչի հետ: Չէ որ Քրիստոսը խաչի վրա «ճզմ-

<sup>1</sup> Ալշամ Ղ., Այրարատ, Վեմետիկ, 1910, էջ 472:

<sup>2</sup> Մխիթար Սեբաստացի, Բառգիրք հայկակեան լեզուի, հ.Բ, Վեմետիկ, 1769, էջ 76:

<sup>3</sup> Դամալանյան Ա., Ավանդապատում, էջ 116-117:

<sup>4</sup> Յովլուր Երգերի ժողովածու, Կ.Պոլիս, 1730, էջ 516:

վելով» ինչպես խաղող՝ թափեց իր կենսաբեր արյունը, որպեսզի արբեցնի-մաքրի մեղսագործ մարդկությունը: Խաչը մեկ նույնանալով օռետոսի հետ հանդես է գալիս որպես խաղողի որթ, որը կազմակերպում է ողջ տիեզերքը<sup>1</sup>, ինչպես տեսնում ենք Դվինի բարավորի քանդակում: Կամ ել դառնում է այգու կենտրոնում գտնվող հնձան, որի վրա զգմվում է խաղող - Քրիստոսը<sup>2</sup>, ինչպես որ հարյուրավոր խաչքարերուն է, երբ դեպի խաչահատումն են իջնում խաղողի ողկուզներ կամ նոներ: Ահա Քասաղից մի քանդակ, որն ամենայն հավանականությամբ Սոլոմոնի 42-րդ սաղմոսի վերարտադրությունն է (որպես փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպես փափագէ անձն իմ առ քեզ, Աստուած”): Եվ ինչ ենք տեսնում. հայ վարպետը եղջերուներին պատկերել է խաղողի այգում, իսկ աղբյուրին փոխարինում է խաչ-հնձանը: Այս հորինվածքները Սուրբքրային թեմաները «այգային լեզվով» ներկայացնող դիդակտիկ պատկերներ չեն միայն. դրանք արտահայտում էին մի կողմից կարոտը դեպի կորուսյալ դրախտը և մյուս կողմից՝ ձգտումը դեպի երկնային այգին ժամանակների վերջում: Ահա թե ինչու այդքան հաճախ էին նրանց դիմում աստվածքանն ու պատմիչը, քանդակագործն ու մանրանկարիչը:

Հայերը հաճախ որպես այգի և «այգային» լեզվով են ներկայացրել մարդկային ճարմինն ու հոգին, մարդկային կյանքն ընդհանրապես: «Եւ հասեալ ի բարւոք ծերութեան՝ ալկորեալ և լի աւուրբք, որպես զողկոյզ հասեալ ի հընձան...», այնպես էլ սուրբ Յովիհաննեսը ամփոփվեց գերեգմանում, գրում է 8-րդ դ. կաթողիկոս Յովիհան Օձնեցու մասին վարքագիրը<sup>3</sup>:

«Քո գունովըն գինի պիտէր  
խըմէի ու արբենայի,  
Քո ծոցդ Աղամայ դըրախտ  
մըտնէի խընծոր քաղէի,  
Քո երկու ծըծամիջին  
պառկէի ու քուն լինէի»,-  
սիրած աղջկան այսպես է երազում 13-14-րդ դդ. հայտնի բանաստեղծ Նահապետ Զուշակը<sup>4</sup>:

<sup>1</sup> Ահա 5-րդ դ. փիլիսոփա Դավիթ Անհաղթի խաչին տված բնորոշումներից մեկը. ”Փայտ սուրբ, որ յերկրի բուսամենով՝ գերագոյն երկնից կամարացն ծայր արձակեալ բարձրացար՝ զամտանելին ի քեզ բարձեալ բերելով պտուղ. գերկին իսկ միանգամայն ն զմիջոցս լցեր գերկնի և գերկիր”(Դարի անյաղը փիլիսոփայի Մատենագրութիւնը, Վեճնետիկ, 1932, էջ 13):

<sup>2</sup> Ահա նույն փիլիսոփայի մի այլ բնորոշում. ”Օրինեալ ես, փայտ սուրբ, իմանալի հնձան, քանզի ի քեզ մոյսում վերա երկնային ամ ճմէցալ ողկոյզ քաւական յուրախութիւն երկնայմոցն և երկրամացոց” (Նույն տեղում, էջ 23):

<sup>3</sup> Յայսմաւուրք, Կ. Պոլիս, 1730, էջ 516:

<sup>4</sup> Դայ դասական քանարեգություն, հ. 2, Երևան, 1986, էջ 141:

Այժմ նորից անդրադառնանք Աղթամարի սուրբ Խաչ տաճարի որթագլարի գոտուն և նկատենք, որ գոտում պատկերված են երկու փորողներ (նկ. 4), որոնք բահերով զինված փորում են գետինը: Ուսումնասիրողների այն ենթադրությունը, թե բահավորները փխրեցնում են կամ թաղում այգին<sup>1</sup>, հավանական լինել չի կարող, քանի որ ողկույզներով ծանրաբեռնված վազերը բերքահավաքի պահին ննան խնամքի կարիք չունեն: Նկատենք, որ փորողներից մեկի կողքին պատկերված է մուկ-առետը ժամանակի անցողիկության հանրահայտ սիմվոլը: Թվում է՝ այստեղ ալեգորիկ կերպով ներկայացված է մեկ այլ ավանդական պատկերացում, որի դրսնորումները տեսնում ենք միջնադարյան պեղիայում: Երկրային ամենագեղեցիկ այգին անգամ հավիտենական չէ, մինչ մենք վայելում ենք նրա պտուղները, ժամանակը (ի դեմս փորողների) ավերում է այն: Եվ սա մի հիշեցում է՝ ուղղված «բարի այգեպանին»<sup>2</sup>:

«Կամին բուսացանել,

Բայց տօքն չար է», - այսպես է մտորում աշխարհի մասին 12-րդ դ. հայտնի բանաստեղծ, կաթողիկոս Գրիգոր Տղան<sup>3</sup>: Իսկ Գրիգորիս Աղթամարցու (16-րդ դ.) մի բանաստեղծության մեջ այգում ընթացող լյանքն անընդհատ նրանից վտարվելու վտանգի տակ է: Ծիշտ է, այս դեպքուն սպառնացողը «հիգեառ» Գաբրիելն է, բայց նույնն է անցողիկության, Երկրային այգու անկատարության և թերաժամության գաղափարը.

«Յամէն առաւօտ և լոյս

Գաբրիելն ասէր հոգոյս,

- Արի, ել ի յայս այգոյս»<sup>4</sup>:

Մեջբերենք նաև աշխարհին ու կյանքին 10-11-րդ դդ. պարսիկ բանաստեղծ Ռութաքի տված բնորոշումը.

«Սիրտ, սա այգի չէ, պտուղ մի՛ փնտրիր, գտնել չես կարող,

Ուրենուտ է սա, որ չի ծանրանում բերքով ու բարով,

Երկու դուռ ունի, իսկ այգեպանը հսկում է վերից,

<sup>1</sup> Տե՛ս օրինակ Օրբելու Ի. Ա., *Պայտառն արմանակո զօճեւտա ու օստրու Ախտամար – Օրբելու Ա. Ինքնառն երանի աշխատանքներ*, Մ., 1968, ս. 138. *Der-Nersessian S. Aghtamar. Church of the Holy Cross, Cambridge. Mass.*, 1965, թ. 28. Դյուրով Լ. Ա. *Օչերք ազգային արվեստի մասին*. Երևան, 1979, ս. 75. Ըստ Երևանյի միավաճար մեթոդական է, եթե պատկերված են իրական այգին և իրական այգեգործական պարբերաշրջանը. ինչպես ընդունել են հենուազուսողները, ապա սպասելի է և առանձին դրվագների իրավամաս-գործանկան մեջմարտությունը:

<sup>2</sup> Այս կապակցությամբ հիշենք հայ արքունիքում առասպելական Կաղարշակ արքայի սահմանած կարգը. «Եւ (կարգէ) յիշեցուցանողս երկուս ի ծեռն գրոյ. այլ ոմն զրարի յիշողութիւնս առնելով. և այլ ոմն զդիւժն դրուեանցն: Եւ բարոյ յիշեցուցանողին հրաման տայ՝ ի բարկութեանն արքայի և յանդրան հրամանն յիշեցուանել զիրամ և զմարդասիրելն» (*Մովսեսի Խորենացոյ Պատմութիւն Յայոց*, էջ 117):

<sup>3</sup> Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1972, էջ 180:

<sup>4</sup> Գրիգորիս Աղթամարցի, (Բանաստեղծություններ), Երևան, 1963, էջ 254:

Սիրտ իմ, իոη դարձիր ու քամու նման անցիր աշխարհով»<sup>1</sup>:

Եվ նրան կարծեք թե երկրորդում է Գրիգոր Տաթևացին՝ գրելով. «Որպէս երկու դռնի քաղաք է կենցաղս մեր. և ընդ մի դուռն յարգանդէն մտանէնք յաշխարհ. և ընդ մի դուռն գերեզմանին ելանէնք յաշխարհէս»<sup>2</sup>: Նույն միտքն է տաճորում և ուշ միջնադարի հայ ամենամեծ քանաստեղծին՝ Սայաթ-Նովային.

«Աշխարհը մե փանջարա է, թաղարումեն բեզարիլ ին»<sup>3</sup>:

Եթե նկատի ունենանք, որ միջնադարում մոտավորապես երկու-երեք մետր լայնություն ունեցող պատերում թացվող նեղ պատուհաններն իրոք անձուկ միջանցքի տեսք ունեին, ապա լիովին հասկանելի է դառնում նաև նման «միջանցքով» անցնելու հեռանկարի դեպքում պատուհանի թաղակապ առաստաղից հոգնել-նեղվելու գաղափարը<sup>4</sup>:

Ուշագրավ է, որ փորողները, որպես ժամանակի անցողիկության խորհրդապատկեր և հիշեցում արքային, բավականին լայնորեն կիրառվել են և պարսկական մանրանկարչական արվեստում: 12-րդ դ. սկսած դրանք արքայի գահակալությունը պատկերող տեսարանների համարյա պարտադիր կերպարներն են: Նրանք արքայի աչքի առաջ փորում են ծառերի արմատները (Ծկ. 5)` ակնարկելով, որ երկրային այգին թերարժեք է և արքան պարտավոր է հիշել այդ նասին<sup>5</sup>:

Աշխարհի անցողիկության փիլիսոփայությունն ինքնին նորույթ չէ Մերձավոր Արևելքում, ուշագրավն այն է, որ հայկական ու պարսկական մշակույթներում, որոնք հենված են երկրագործական-այգային հզոր ժառանգության վրա, այն ձեռք է բերել նաև այգային լեզու և այգային կերպագորում:

<sup>1</sup> Մարգարտաշար. ուրբայար Լկազմ. Ա. Կողմոյամ, Երևան, 1960, էջ 27:

<sup>2</sup> Գրիգոր Տաթևացի, Զմեռան հասոր, Երևան, 1998, էջ 258:

<sup>3</sup> Պայ դասական քարերգություն, Երևան, հ. 2, 1986, էջ 311:

<sup>4</sup> Ցավոք «Նորան գույնը» հայտնի ֆիլմում Մերգեյ Փարաջանովը Սայաթ Նովայի այս միտքը հասկացել է այլ իմաստով՝ որպես դեպի դուրս նայող պատուհամ՝ նույնացնելով այն ոռուսակամ “օկնո Յ միր” (պատուհամ դեպի աշխարհ) արտահայտության հետ:


<sup>5</sup> Տե՛ս Շուկորով Ռ. Իսկուստում սредневекового Ирана, М., 1989, с.225-231.



Ակ. 1 Մամրամաս Աղբամարի սր. Խաչ տաճարի որթազալարի գոտուց, 10-րդ դ. (լուս. Զ. Սարգսյանի):



Ակ. 2 Ղաջան, մամրամաս Աղբամարի սր. Խաչ տաճարի որթազալարի գոտուց (ըստ Օրբելի, 1968):




Ակ. 3 Աղքան այգում, մամրամաս Աղբամարի սր. Խաչ տաճարի որթազալարի գոտուց (լուս. Զ. Սարգսյանի):



Բա. 1. Խոհ անորոշութեան Ծառակ փառ (լուս. Հ. Շ. Շահումյան)



Ակ. 4 Բահակիրմերը, մամրամաս Աղբամարի սր. Խաչ տաճարի որթազալարի գոտուց (ըստ Օրբելի, 1968):



Ակ. 5 Արքայի թագադրությունը բահակիրմերով հանդերձ, մամրամկար պարսկական «Թիթար ալ-Թիթիաթ» գրքից, 1199թ. (ըստ Շլկորով, 1989):

## Резюме

В статье рассматриваются традиционные армянские садовые представления об идеальном пространстве и жизненном процессе. Обосновывается, что садовые идеи христианства попав в систему армянского мировосприятия генерировали ряд представлений об Армении как об утерянном рае, об Адаме как о последнем и Христе как о первом садовнике и т.д.

Среди народных представлений восстанавливаются образ Армении как виноградника, образ царя как доброго садовника. Подробно рассматриваются армянские и персидские представления о бренности мира, которые в обеих культурах приобрели подчеркнутый садовый характер.

## Summary

Article outlines the *garden* language, themes and iconographical manifestations of perceptions on ideal lifespace and lifeprocces. It is pointed out that the *garden* ideas of Christianity were processed by Armenian worldperception into a wide range of notions presenting Amenian land as a “paradise lost”, Christ and Armenian saints and martyrs as a vine or as grapes pressed in the winepress, Adam (Noah, Abraham) as the first and Christ as last and highest gardener, cross as a vineshape cosmic-tree etc.

Among the folk notions are restored the ideal Armenian land as a winegard, the ideal life as that ongoing in the garden, the king as a good gardener, the real world as an anti-garden. It is stressed that the philosophy of inferiority of the world by itself was not a novice in the Middle East. It is remarkable, that in Armenian and Persian cultures, which based on strong agricultural-garden making heritage, the philosophy gained also garden language and garden image.